

« Դանդաղ, կամաց կ'երևայ քեզ այս. « մինչդեռ հոս, այս յամբաշարժութեան « մէջն է արագութիւնն. վասնզի հոս ժա. « մանակն, միջոցն՝ նշանակութիւն չ'ունի:

« Հող կը և ի հող դարձիս...»:

« Առ ափ մը հող՝ արիւն շինէ. ա՛ռ ափ « մը հող՝ լեարդ, սիրտ, աշբ, ջիղ, մազի « մէկ թէլ մը շինէ...»

« Ասոնց նորէն պէտք է հող դառնան. « մէկիկ մէկիկ քակուին, փշրին, իրենց « նախկին վիճակին վերածուելու համար:

« Հոս ահազին ստամոքս մ'է, որ ան « դու կ'որոճայ ու կը մարսէ:

\*

« Եւ ի՞նչ շարժում, վարն, խորն...»:

« Գետեր կը թաւալին՝ անցնելով կրակ- « ներու մէջէ՝ առանց բռնկելու. և ան « ծախ կրակն կ'այրի բոցաճաճանչ զե- « տերու մէջէ՝ առանց մարելու:

« Ի՞նչ հրասքանչ զործունէութիւն: « Ժայռեր, երկաթներ, պղինձներ, ու-

« կի, աղամանդ՝ խանճարուր կը կապէն, « կեանք, սնունդ կ'ստանան:

« Հունտի մը հատիկն հոս, վերն, բո- « վիկու երկունքի մէջ է, ինչպէս խորն « աւշ հեղուկ մը՝ որ երկաթին սաղմն է:

« Մեծայարգ սոկին տեսնես՝ որ սրտի « մը երակներն՝ ի՞նչ բարախուռմեր ու- « նեցած է երբեմն՝ մէկիկ մէկիկ բա- « կուելով՝ արագ արագ կը սահին անոր « սրբանն:

« Աչքեր՝ որոց շառաւիդք կը լուծուին՝ « աղամանդին, ուղեղն՝ կայլակ կայլակ « կը վարատի սնդիկի գործարանն . . . :

« Մամուկի սստայնին պէս՝ կը սահին ա- « մենքն իրենց վայրն:

\*

« Լեզուս՝ այսինքն քու լեզուդ՝ « շփոթ պիտի խօսի, ականջ շփոթ պի- « տի լոէ խօսքերս, և չի պիտի կարե- « նամ խօսիլ քեզ անկարելին:

« Կը յիշեմ. շատ անգամ և ես խոր- « հած, մտածած եմ թէ ի՞նչ է մահն, « որպէս ի ծագէ աշխարհի մտածած են « մարդիկ:

« Սակայն, ըսեմ. Աստուած գաղտնիք

« մը ըրաւ զայն, և որչափ արդար ու « նշամարիտ: Ո՞ր հարսն պիտի փափաքէր « աչքի մը արցունցն՝ թերես նախահօրն « կամ իրեն պէս աղջկան մը արցունցն՝ « և կուրծքին վրայ զարդ մը դնել... Ո՞վ « պիտի ուզէր զգացած, հառաջած, մա- « շած սրտերու արզասիք՝ մետաղ մը գոր- « ծածել, սիրել, պաշտել....»

« Ո՞վ պիտի ուզէր ուրախութեան զի- « նին արքենալ՝ երբ ողկոյզին ամեն մէկ « հատիկին՝ թէ քաղցրահամ զեղձի մը « կեղեկին տակ պարունակած հիւթին՝ զիտ- « նար թէ ի՞նչպէս այն նուրբ մաշկին « մէջ՝ շիթ առ շիթ, չոր փայտէ մը վե- « րանալով, ծծուելով կը կազմուի, որոնք « ի՞նչէր են և ի՞նչպէս կը ժողովուին այդ « կաթիլ կաթիլ հեղուկներն...»:

Բ. Յ. Փ.

### Շարայարելի

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աթոքիկիամ չ. Ներսիս. — Անանք (Վ. Է.) . 337

### ՃԱՑԱԿԱՆ ՃԵՄԱՐՄԱՆ

չ. Ղեւող Ալիշամ. — Օրազիր առժաման ազգ- ման մաս և սրբ (1842) . . . . . 351

Տաղաւարեամ ն. . . . . Արուազիդ պատմութեան Հայոց ի սկզբան՝ մինչ շԱռշակունի Հարստութեան . 353

Նահապետիամ չ. Գ. — Ղազր Փարպեցոյ մասին (Առ Արշամ) . . . . . 357

Գոտուրիամ չ. Մ. — Առաքել Արհեցանց Կո- րազիւր տաղեր (Երգ վասն Օտարութեան) . . . . . 359

### ԳՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ

չ. Արուէն Զավիկեամ. — Դիրէ մահէ «Վիր- զիւրիսի ինէպահն»ին թարգմ. . . . . 361

Տիրոյեամ չ. Ա. — Մինամարտ Տանկերնի և Արդանարի (Ազատումն Երասաղեմի, Եղո Ժթ.) . . . . . 364

«Տասոս Տորուատոյ» թարգմ. . . . . 364

Ազատիմ. — Առ եղովն (բանաստեղծ) . . . . . 369

Մոլոր Թոլիման. — Քաջը բնարն իմ Հայրե- նեաց (բնաս), թարգմ. Տ. Ե. Ա. . . . . 369

չ. Մ. Վ. Սահակեամ. — Գաղանիք Անեստ. Կոյ. պատմ. Վ. Էպ . . . . . 370

### ՃԱՑԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ

Ակուլ. Նոր Մատենագիտ. չ. Ա. Ղազրեկան. 378

Գոտուրիամ չ. Մ. — Առաջին Գայլ ի Գրոց ըսրբա. չ. Թ. Թափմաննի. — Հայկական Օրոր. 381

### ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Ք

ի Մահ Պաղոս Միքամեան. — Խոհը . . . . . 382

Իմաստներ . . . . . 351